Արձանագրություն N 2

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/20» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **28.12.2018թ.**
ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Մամուլյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Համբարձումյան, Տ. Պողոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ն. Մամուլյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ eauction.armeps.am կայքի միջոցով հրապարակված գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանել 2018 թվականի դեկտեմբերի 25-ը, ժամը՝ 11:00-ն, իսկ հակադարձ աճուրդը սկսվել է 27.12.2018 թվականին 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ն. Մամուլյան)

Գնման ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	Պրոֆիլայն Էռ Էմ ՍՊԸ
2	ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ
3	Սմարթլայն ՍՊԸ
4	Կոմպասս ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ն. Մամուլյան)

Չ/Հ	Ձեռքբերվող ծառայության անվանումը	նախահաշվային գներ	Պրոֆիլայն Էռ Էմ ՍՊԸ	ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ	Սմարթլայն ՍՊԸ	Կոմպասս ՍՊԸ

1	1. քարտրիջներ	30000	7350	7440	96000	
2	2. քարտրիջներ	36000	7350	7440	117000	18000
3	3. քարտրիջներ	36000	7350	7440	117000	
4	4. քարտրիջներ	36000	7350	7440	114000	18000
5	5. քարտրիջներ	30000	7350	7440	114000	
6	6. քարտրիջներ	20000	4980	5040	64000	12000
7	7.համակարգչային ստեղնաշարեր	12500		39660		
8	8. մկնիկ, համակարգչային, լարով	20000				
9	9. սնուցման սարք	184000		203340		207000

2.1. Մասնակիցների կողմից ներկայացված դիմում-հայտարարությունները կազմված են հրավերով սահմանված պահանջների համապատասխան, բացառությամբ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել է Ս. Սուքիասյանի կողմից, սակայն հայտում բացակայում է «Կոմպասս» ՍՊԸ–ի տնօրենի՝ Ա. Մանվելյանի կողմից վերջինիս տրված լիազորագիրը՝ հրավերով սահմանված փաստաթուղթը ստորագրելու իրավասության վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 40-րդ կետով և «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով՝ որոշեց մերժել «Կոմպասս» ՍՊԸ-ի հայտը:

1-6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Պրոֆիլայն Էռ Էմ » ՍՊԸ–ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հաշվի առնելով, որ 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով մասնակիցների գնային առաջարկները գերազանցել են գնման առարկայի նախահաշվային արժեքը՝ համակարգի կողմից նշված չափաբաժինների մասով մասնակիցների հայտերը մերժվել են, իսկ 8-րդ չափաբաժնի մասով ոչ մի գնային առաջարկ ներկայացված չէ, գնահատող հանձնաժողովը որոշեց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի 1-ին կետի 1-ին և 3-րդ ենթակետերի համաձայն չկայացած հայտարարել վերոնշյալ չափաբաժինները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցելու մասին

(Ն. Մամուլյան)

4.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ - 0:

4.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 4.1 կետում նշված փաստաթղթի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ն. Մամուլյան

Անդամներ՝ ---------- Ա. Համբարձումյան

---------- Տ. Պողոսյան

Քարտուղար՝ ---------- Ի. Եղիազարյան